ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ 2020թ. Երևան համայնքի բյուջեի Արաբկիր վարչական շրջանի մասով, Հրազդանի կիրճի բարեկարգում ծրագրով, նախատեսված է 5,000.0 հազ. դրամ՝ Հրազդանի կիրճում մաքրման աշխատանքներ կատարելու համար, որի փաստացի ծախսը 18.12.2020թ. կազմում է 2,128.5 հազ. դրամ:

Հրազդանի կիրճում կատարվում են հետևյալ աշխատանքները՝ գարնան ձնհալքից և անձրևների ժամանակ փլուզված հողի, քարերի և այլ տարաբնույթ աղբի հավաքում և տեղափոխում, ինչպես նաև առվի հատակի, տարածքի մայթերի մաքրում, տարաբնույթ աղբից և կոճղաշիվերից:

Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով՝ վերը նշված աշխատանքների շրջանակներում, նախատեսվել է 3,000.0 հազ. դրամ:

Հրազդանի կիրճի բարեկարգման աշխատանքների գնման մրցույթում հաղթող է ճանաչվել «Ս. ՀՈՍՈ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր: Ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից (20.03.2020թ.) մինչև ս.թ. դեկտեմբերի 25-ն իրականացնել «Արաբկիր» զբոսայգու վերջնամասից մինչև Կիևյան կամուրջն ընկած ճանապարհահատվածի առվի՝ տիղմից, տերևներից, փլուզված հողից և շինաղբից պարբերաբար մաքրման, ավտոմեքենա բարձման և աղբավայր տեղափոխման աշխատանքներ:

Մեկ այլ ծրագրով իրականացվում է ճանապարհի նույն հատվածի մետաղական արգելապատնեշի վերականգնման և վերանորոգման աշխատանքները: Գնման մրցույթում հաղթող է ճանաչվել «Ս. ՀՈՍՈ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր: Մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը վերանորոգվել և վերատեղադրվել է 180 և կառուցվել է 102 գծամետր նոր մետաղական արգելապատնեշ, կատարվել են ներկման աշխատանքներ:

2021թ. նախատեսվում է վերանորոգել 66 գծամետր մետաղական արգելապատնեշ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ այս ծրագրերը թույլ են տալիս պարբերաբար մաքրել Արաբկիր վարչական շրջանի տարածքում գտնվող ճանապարհահատվածը և ապահովել երթևեկության անվտանգությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ